

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/8

10 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Քրոնոգարանտ» ՍՊԸ 08.10.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 298316/02 որոշման դեմ:

#### **«Քրոնոգարանտ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Քրոնոգարանտ» ՍՊԸ-ն ս.թ. հունիսի 4-ին կատարել է սխալ վճարում ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գծով 9470 դրամ 900005001020 հաշվեհամարին: Սակայն, ընկերության կողմից ներկայացված գրավոր դիմումի համաձայն Կենտրոնի ՀՏ կողմից կատարվել է հաշվանցում 9470 դրամի չափով 900005001020 ԱԱՀ-ի հաշվեհամարից 900005000345 ԱԱՀ-ի հաշվեհամարին:

Ելնելով վերը նշվածից «Քրոնոգարանտ» ՍՊԸ-ն ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն չունի:

Հիմք ընդունելով ընկերության կողմից Կենտրոնի ՀՏ 10 հունիսի 2015թ.-ին ներկայացված դիմումը ԱԱՀ-ի գումարը հաշվանցելու վերաբերյալ, որի հիման վրա Կենտրոնի ՀՏ կողմից կատարվել է հաշվանցումը, ինչպես նաև ընկերության կողմից ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին ուղղած դիմումը, 28 օգոստոսի 2015 թ-ին կայացված հարկ վճարողի ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 269 որոշումը կասեցվել է՝ «Քրոնոգարանտ» ՍՊԸ-ի հարկային պարտավորության բացակայության պատճառով:

Ելնելով վերը նշվածից՝ գանգատաբերը խնդրում է «Քրոնոգարանտ» ՍՊԸ տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 298316/02 որոշումը բեկանել՝ վարչական պատասխանատվության ենթարկելու և վարչական տուգանք նշանակելու հիմքերի բացակայության պատճառով:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 22.09.2015 թ-ի 904 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Քրոնոգարանտ» ՍՊԸ-ի տնօրենը սահմանված ժամկետում չի վճարել ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումար՝ 10.359 դրամի չափով: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ

օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 22.09.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 298316/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով «Քրոնոգարանտ» ՍՊԸ-ի տնօրեն Անահիտ Մկրտչյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում, «Քրոնոգարանտ» ՍՊԸ կողմից 15.05.2015 թ-ին ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվել են ապրանքներ, որի դիմաց առաջացած ԱԱՀ-ն՝ գումարով 9470 դրամ, ընկերության կողմից վճարվել է 04.06.2015 թ-ին: Սակայն նշված ԱԱՀ-ի գումարը թիվ 900005000345 հաշվեհամարին փոխանցելու փոխարեն, այն փոխանցվել է թիվ 900005001020 հաշվեհամարին:

Ընկերության կողմից 10.06.2015 թ-ին Կենտրոնի ՀՏ է ներկայացվել գրավոր դիմում՝ վճարված գումարը ճիշտ հաշվեհամարին վերաձևակերպելու վերաբերյալ: Համապատասխան վերաձևակերպումը Կենտրոնի ՀՏ կողմից կատարվել է 11.06.2015 թ-ին: Այսինքն, 11.06.2015 թ-ից ընկերությունը ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ԱԱՀ-ի պարտավորություններ արդեն իսկ չի ունեցել:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների ԱԱՀ-ի գծով պարտավորությունները հաշվառվում են անձնական հաշվի թղթային քարտերում (էլեկտրոնային հաշվառում չի վարվում):

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ համապատասխան աշխատակիցն ընկերության անձնական հաշվի թղթային քարտում վերոգրյալ վերաձևակերպումը չի կատարել: Նշված աշխատակիցն ազատվել է աշխատանքից և ընկերության քարտը վարող հաջորդ աշխատակիցը, տեղեկացված չլինելով նշված վերաձևակերպման մասին իրավանական բաժին է ներկայացրել սխալ տվյալներ՝ ընկերության ԱԱՀ-ի գծով չկատարված պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 298316/02 որոշումը կայացնելու դրությամբ, ընկերությունը ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ԱԱՀ-ի պարտավորություններ չի ունեցել, այսինքն՝ Որոշումը կայացվել է դրանում մատնանշված խախտման հիմքի բացակայության պայմաններում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 22.09.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 298316/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

 **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**